ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտների և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մագդա Արմենի Արսենյանի «Խորհրդարանական մշակույթի կայացման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսության մասին:

Մագդա Արսենյանի ատենախոսության թեման արդիական է և հրատապ: Հիրավի Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է խորհրդարանի՝ որպես հանրային իշխանության գերակա ինստիտուտի կողմից նոր հումանիզմի սկզբունքների կիրառման և «անցյալ-ներկա-ապագա» եռաչափության հենքի վրա ապագային միտված գործառութային արդյունավետության ապահովման հրամայականով:

Ատենախոսության հեղինակին հաջողվել է հիմնավոր վերլուծության ենթարկել խորհրդարանական մշակույթի տեսական հիմքերն ու վեր հանել վերջինիս քաղաքակրթական, արժեքաբանական ու ինստիտուցիոնալ չափումները, որոշակիացնել խորհրդարանական մշակույթի զարգացման ստատուս քվոն և ապա մշակել ապագային միտված (future-focused organizational culture) զարգացման ռազմավարություն՝ այն դիտարկելով որպես խորհրդարանական մշակույթի կայացման և ժողովրդավարական համախմբման հրամայական:

Ներկայումս, ՀՀ պետական կառավարման համակարգում, խորհրդարանական մշակույթի զարգացման կարևորությունը առավել ամբողջական լուսաբանման կարիք ունի և այս ոլորտի ուսումնասիրությունները սակավաթիվ են: Հենց սրանցով էլ կարող ենք պայմանավորել թեմայի արդիականությունը:

Մ. Արսենյանի թեկնածուական ատենախոսությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, դրա հիմնական նպատակներն ու խնդիրները, աղբյուրների բնութագրերը, թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը և գիտական նորարարությունն ու գործնական նշանակությունը: Ատենախոսությունում ներկայացված են նաև ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը, հիմնավորված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության համար հիմք է հանդիսացել սկզբնաղբյուրների, ինչպես նաև տարբեր մասնագետների, վերլուծաբանների, հիմնախնդրով զբաղվողների գիտական հետազոտությունների վերլուծություններն ու աշխատությունները: Օգտագործված է տարբեր լեզուներով հարուստ գրականություն, ինչը լուրջ արժեք է հաղորդում աշխատանքին:

Հեղինակը պաշտպանության է ներկայացրել խորհրդարանական մշակույթի վերաբերյալ ժամանակակից տեսությունների առանձնահատկություններն ու բաղադրիչները՝ դիտարկելով վերջինիս կայացման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում:

Առաջին՝ «Խորհրդարանական մշակույթի ձևավորման իրավաքաղաքական ակունքները», գլխում համակարգված ուսումնասիրության է ենթարկվել խորհրդարանական մշակույթ եզրույթը՝ որպես քաղաքական և սահմանադրական մշակույթների փոխազդեցության արդյունք: Անդրադարձ է կատարվել «խորհրդանական մշակույթ» հասկացության էությանը, կառուցվածքին, գործառույթներին և ժողովրդավարական զարգացման տարբեր հետագիծ ունեցող երկրներում դրա զարգացման էվոլյուցիոն առանձնահատկություններին: Հեղինակը դիտարկել է «խորհրդարանական մշակույթ» և «քաղաքական մշակույթ» կատեգորիաների փոխազդեցությունը քաղաքագիտության մեջ կիրառվող քաղաքական մշակույթի բնորոշման հայեցակարգային մոտեցումների (կողմնորոշիչ-արժեքաբանական, վարքաբանական և ինստիտուտուցիոնալ) շրջանակներում՝ նպատակ ունենալով պարզել խորհրդարանական մշակույթի քաղաքակրթական, արժեքաբանական ու ինստիտուցիոնալ չափումները և ապա նախորոշել

խորհրդարանական մշակույթի զարգացման այն մոդելը, որը կարող է արդիական լինել քաղաքական մշակույթի նույնանման փորձառություն ունեցող երկրների պարագայում: Հեղինակը վերլուծության է ենթարկել նաև «փափուկ ուժ»-ի սոցիալականացումը և վերասոցիալականացումը որպես ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հրամայական (էջ 17-55):

Երկրորդ՝ «Խորհրդարանական մշակույթի կայացման արժեքաբանական նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում», խորագրով գլխում ուսումնասիրվել են ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները և նախադրյալները նեոքաղաքականության համատեքստում: Դիտարկվել են հետխորհրդային երկրների, այդ թվում Հայաստանի Հանրապետության քաղաքական կերպափոխման գործընթացները: Համակողմանի վերլուծության են ենթարկվել նաև արդի քաղաքագիտության մեջ գոյություն ունեցող ժողովրդավարական վարչակարգերի որակական չափման տարբեր մոտեցումները: Այս գլխում ուսումնասիրության են ենթարկվել նաև խորհրդարանական մշակույթի սուբյեկտիվ և օբյեկտիվ չափորոշիչները ժողովրդավարության որակի գնահատման չափումներում: Ըստ հեղինակի նշված չափումներն ունեն կարևոր նշանակություն խորհրդարանի գործառութային արդյունավետության գնահատման տեսանկյունից: Նշվում է, որ խորհրդարանի գործառութային արդյունավետությունը պայմանավորված է խորհրդարանական մշակույթի ստատուս քվոյով, որն արտացոլում է պատգամավորների և խորհրդարանական ինստիտուտների վարքային մոդելները: Հեղինակը անդրադարձ է կատարել նաև Հայաաստանի Հանրապետությունում խորհրդարանական մշակույթի ձևավորման պատմաքաղաքական առանձնահատկություններին: Առաջարկվում է ՀՀ խորհրդարանական մշակույթի էվոլյուցիոն զարգացումը դիտարկել նախքան պետական ինքնիշխանության ինստիտուցիոնալացման և սահմանադրաիրավական կարգավորման ժամանակահատվածում՝ անդրադառնալով առաջին և երկրորդ հանրապետությունների սահմանադրական և քաղաքական մշակույթի փոռձառության ուսումնասիրությանը (էջ 56-93):

Երրորդ՝ «Խորհրդարանական մշակույթի կայացման ինստիտուցիոնալ նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում», գլխում ուսումնասիրվել են հետխորհրդային իներցիան և խորհրդարանի դերի կերպափոխումը ՀՀ պետական իշխանության ինստիտուցիոնալացման չորս ալիքների հոլովույթում: Վերլուծության են ենթարկվել կառավարման նախագահական, կիսանախագահական և խոհրդարանական մոդելները՝ անդրադառնալով դրանց առավելություններին և թերություններին: Հեղինակը ներկայացրել է նաև քաղաքական կոալիցիաների ձևավորումը որպես ինստիտուցիոնալ գործիք խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման համատեքստում՝ նշելով, որ ժողովրդավարական վարչակարգերում քաղաքական կոալիցիաները ծառայում են որպես տարբեր քաղաքական ուժերի կողմից ներկայացվող շահերի և նպատակների համադրման ինստիտուցիոնալ գործիքներ: Որպես խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման նախապայման նշվում է կուսակցական համակարգի կայունությունը: Հեղինակի կարծիքով՝ ՀՀ կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումը և գործառութային արդյունավետության անկումը պայմանավորված է ինչպես Հայաստանի երեք հանրապետությունների գոյության ժամանակաշրջանում ձևավորված քաղաքական մշակույթի առանձնահատկություններով, նրանց գործունեությունը կարգավորող սահմանադրաիրավական և օրենսդրական նորմերի ու դրույթների անկատարությամբ, այնպես էլ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված քաղաքական իրավունքների և ազատությունների հասարակության կողմից իրացման ցածր մակարդակով: Որպես իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև փոխազդեցության արդյունավետության հրամայական դիտարկվել է նաև խորհրդարանական վերահսկողությունը: Այս գլխի վերջին հատվածում հեղինակը անդրադարձ է կատարել նաև խորհրդարանական ընտրանու և քաղաքացիական հասարակության սոցիալականացման խնդիրին խորհրդարանական կառավարման պայմաններում: (էջ 94-153):

Ատենախոսության նպատակը, դրան համապատասխան սահմանված խնդիրները և վերջիններիս իրականացման նպատակով կիրառված մեթոդներն ու գործիքակազմը ներդաշնակ են ու համակարգված: Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս բացահայտել, տարբեր տեսանկյուններից արժևորել խորհրդարանական մշակույթի դերն ու նշանակությունը պետության քաղաքական համակարգում և հասարակության կյանքում՝ այն դիտարկելով որպես ժողովրդավարական համախմբման հրամայական, վեր հանել վերջինիս դերակատարությունը հանրային և քաղաքական կառավարման արդիականացման գործընթացներում, ինչպես նաև դրա կայացման համար խոչընդոտող ինստիտուցիոնալ և օրենսդրական բացերը, սոցիալ-հոգեբանական, սոցիոմշակութային գործոնները:

Ատենախոսության գիտական նորույթի առումով կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները:

ՀՀ-ում ԽՄ-ի կայացման գործընթացի համատեքստում հստակեցվել է խորհրդարանական մշակույթ հասկացության գործառութային դաշտը, դերակատարները և կառուցվածքը, ինչպես նաև ներկայացվել է խորհրդարանական մշակույթի նոր սահմանում: Տարբերակվել են ԽՄ կայացման գործընթացի՝ անցյալ-ներկա-ապագա եռաչափությամբ պայմանավորված և՛ արժեքաբանական և՛ ինստիտուցիոնալ նախադրյալները, որոնք հնարավորություն են տալիս բնորոշել մշակութային ստատուս քվոն՝ ժողովրդավարության որակի բարձրացման նկատառումներով ապագային միտված զարգացման ռազմավարություն մշակելու նպատակով: Հիմնավորվել է ԽՄ-ի՝ ժողովրդավարական անցման գործընթացում և՛ որպես բաղադրիչ, և՛ որպես նախադրյալ լինելու հանգամանքը: Այս առումով ուշադրության է արժանի ժողովրդավարության որակի գնահատման սուբյեկտիվ չափորոշիչների հայեցակարգը, որի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պնդել, որ անկախ կառավարման մոդելից՝ ԽՄ-ն արտացոլում է պատմական հիշողությամբ, միֆերով, կարծրատիպերով և ավանդույթներով պայմանավորված հասարակության վարքային մոդելները: Հիմնավորվել է ՀՀ-ում ԽՄ-ի կայացման

գործընթացում քաղաքական երկկողմ սոցիալականացման և վերասոցիալականացման միջոցով քաղաքական և քաղաքացիական հասարակության զարգացման և հզորացման անհրաժեշտությունը: ՀՀ-ում ԽՄ կայացման գործընթացում քաղաքականության դերակատարների հաշվետվողականության, քաղաքական պատասխանատվության ամրագրման և խորհրդարանի գործառութային արդյունավետության նկատառումներով կարևորվել է պակտի կնքումը որպես քաղաքական շահերի համադրման ինստիտուցիոնալ գործիք: Իրականացվել է 1995 թ. ՀՀ Սահմանադրության, դրա 2005 թ. և 2015 թ. փոփոխությունների, ինչպես նաև «Կուսակցությունների մասին» 2002 թ. ՀՀ օրենքի և «Կուսակցությունների մասին» 2016 թ. ՀՀ սահմանադրական օրենքի համեմատական վերլուծություն, որը հնարավորություն է ընձեռել վեր հանելու կուսակցական համակարգի կայացման օրենսդրական հիմնախնդիրները և ներկայացնել առաջարկներ՝ նպաստելով ինստիտուցիոնալ մակարդակում կուսակցությունների ներքին ժողովրդավարության զարգացմանը, կուսակցական համակարգի մասնատվածության կրճատմանը և գաղափարական հենքի ամրապնդմանը: Օրենսդիր-գործադիր ճյուղերի միջև փոխազդեցության որակի բարձրացման նկատառումներով իրականացվել է ՀՀ և ԳԴՀ խորհրդարանական վերահսկողության մոդելների համեմատական ուսումնասիրություն, որի շրջանակներում դիտարկվել են պետական բյուջեի մասին օրենքի նախագծի ընդունման և քննարկման ընթացակարգերը: Ներկայացվել են քաղաքական մշակույթի զարգացման շարժընթացով և տեղեկատվական հեղափոխությամբ պայմանավորված խորհրդարանի՝ նոր հումանիզմի սկզբունքների կիրարկման շրջանակներում հանրային իշխանության քաղաքացիավարացման անհրաժեշտությունը: Ուսումնասիրելով ՀՀ անկախության 28 տարիների ընթացքում քաղաքացիական հասարակության ինստիտուտների բազմակողմ դերակատարումը և այլն;

Ատենախոսությունն, անկասկած, ունի նաև **գիտագործնական նշանակություն**: Հետազոտության կիրառական նշանակությունը պայմանավորված

է արդի փուլում ժողովրդավարության ինստիտուցիոնալ կառույցների կայացման և զարգացման, հասարակության-իշխանության միջև առկա և խորացման միտում ունեցող անջրպետի չեզոքացման, օրենսդրական դաշտի հետագա կատարելագործման վերաբերյալ առաջարկություններով: Հետազոտական աշխատանքի արդյունքները կարող են օգտակար լինել և ընդգրկվել քաղաքագիտության, պետության և իրավունքի տեսության, քաղաքացիական կրթության դասընթացներում: Հետազոտության մեջ կատարված առաջարկություններն ու եզրակացությունները կարող են օգտագործվել ռազմավարական նոր փաստաթղթեր ու ծրագրեր մշակելիս, օրենսդրական բարեփոխումներ իրականացնելիս և այլն:

Ատենախոսը տիրապետում և պահանջվող մակարդակով կիրառում է ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ քաղաքագիտական և միջառարկայական **մեթոդաբանություն**: Մասնավորապես, ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, համանմանության, ինչպես նաև քաղաքագիտության համեմատական մեթոդները: Որպես հատուկ գիտական մեթոդ օգտագործվել է փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը: Համեմատական մեթոդի կիրառմամբ համեմատվել են հետխորհրդային պետություններում պետություն-քաղաքացիական հասարակություն գործակցության ընթացակարգերը, առկա մարտահրավերներն ու ձեռքբերումները: Աշխատանքում կիրառվել են նաև վիճակագրական, համակարգման և դասակարգման մեթոդները: Վերջիններիս կիրառմամբ դասակարգվել են ԽՄ լայն և նեղ սահմանումները, եզրահանգումները, ինչպես նաև արժեքաբանական և ինստիտուցիոնալ նախադրյալները ԽՄ կայացման գործընթացում: Դիսկուրս ուսումնասիրության ընթացքում անցկացվել են նաև հարցազրույցներ, որոնցից երկուսը տպագրվել են «Եվրոպական միությունը, Կենտրոնական Ասիան և Հարավային Կովկասը միջազգային հարաբերությունների համակարգում» (EUCACIS) միջազգային դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հրապարակված առցանց հանդեսներում:

Ատենախոսության շարադրման լեզուն և ոճը լիովին համապատասխանում են պահանջվող մակարդակին: Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ, հմտությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ: Համապատասխան խնդիրներ ձևակերպելու, դրանց համապատասխան մեթոդներ գործադրելու և համապատասխան եզրահանգումներ կատարելու՝ ատենախոսության մեջ դրսևորված մշակույթը վկայում է ատենախոսի գիտահետազոտական աշխատանքներ կատարելու՝ ձևավորված կարողությունների մասին:

Ատենախոսությունը զերծ չէ նաև որոշակի **թերություններից**, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալները.

1. ատենախոսության գիտական մշակվածության համատեքստում, ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն ուսումնասիրեր նաև այս ոլորտի այնպիսի հեղինակների, ինչպիսիք են Ա.Մելվիլը, Մ.Ֆաուլ, Ի. Վորոբյիի, Ա. Մալցանի և ուրիշների աշխատությունները: Նրանց գիտական ուսումնասիրությունները հատկապես արժեքավոր են՝ կապված հետխորհրդային երկրների քաղաքական կերպափոխումների, քաղաքական փոփոխությունների և քաղաքական զարգացման մասին ձևավորված պատկերացումների հայեցակարգային նորացման խնդրի հետ: Այս ամենից զատ, հետազոտությունն էլ ավելի արժեքավոր կլիներ եթե խորությամբ վերլուծության ենթարկվեր ՀՀ օրեսդրական, իրավական, նորմատիվային ակտերը կոնկրետ խորհրդարանական մշակույթի ձևավորման, ազդեցության, դերի և նշանակության առումով (**ՀՀ Սահմանադրություն, «ԱԺ Կանոնակարգ» ՀՀ օրենք, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ընտրական օրենսգիրք**): Դրանց շնորհիվ հնարավոր կլիներ առավել հանգամանալից ուսումնասիրել ՀՀ խորհրդարանական կառավարման մշակույթի հիմնական առանձնահատկություններն ու դրա ունեցած նշանակությունը:

2. Որպես գիտական նորույթ հեղինակն առաջարկում է ՀՀ ԱԺ-ին կից ստեղծել քաղաքացիական հասարակության ֆորում (էջ 14), սակայն բուն հետազոտության և հատկապես եզրահանգման մեջ հստակեցված չեն այս նոր ստեղծվող մարմնի կոնկրետ նպատակները և գործառույթները: Արդյո՞ք կարծում եք, որ «Թավշյա հեղափոխությամբ» պայմանավորված ՔՀԿ-ներ նվազ մասնակցություն ունեն հետհեղափոխական գործընթացներին:
3. Աշխատանքն էականորեն կշահեր, եթե հեղինակն անդրադառնար ոչ միայն Գերմանիայի, այլ խորհրդարանական կառավարման համակարգեր ունեցող մի քանի առաջատար պետությունների օրինակների ուսումնասիրությանը (Իտալիա, Ֆինլանդիա, Հունաստան, Սինգապուր, Իսրայել և այլն): Չնայած հետազոտության մեջ հետխորհրդային երկրների անցումային փուլին բնորոշ քաղաքական համակարգերի և ժողովրդավարության կայացման առանձնահատկությունների անդրադարձին, այնուամենայնիվ կարծում եմ պետք է վերլուծվեր նաև հետխորհրդային երկրներում կառավարման ձևերի տրասֆորմացիայի արդյունքում առաջացած թերությունները, արդյունավետության մակարդակը, զարգացման միտումները՝ համեմատելով դրանք մեր երկրի կառավարման համակարգի հետ: Այս ամենը կարելի էր ներկայացնել նույնիսկ առանձին ենթագլխով:
4. Ատենախոսության երկրորդ գլխում, անդրադառնալով հետխորհրդային երկրներում խորհրդարանական մշակույթի ձևավորման նախադրյալներին, ատենախոսն օգտագործում է զգալի քանակությամբ տեսական գրականություն: Հղում անելով քաղաքագիտության մեջ առկա տաբեր մոտեցումներին, տեսություններին՝ հեղինակը համեմատաբար քիչ է ներկայացրել սեփական դատողություններն ու գնահատականները: Մասնավորապես 78-80 էջերում անդրադառնում է խորհրդարանի գործառութային արդյունավետության չափման մոտեցումներին(օրինակ Ս. Ֆիշի և Մ. Քրյոնիգի կողմից մշակված խորհրդարանի լիազորությունների (Parliamentary Powers Index (PPI)) չափման ինդեքսը): Կարծում եմ

աշխատանքն էականորեն կշահեր, եթե հեղինակը հիշյալ մոտեցումներով իրականացներ ՀՀ Խորհրդարանի գործառույթային արդյունավետության չափում՝ գնահատելով խորհրդարանական մշակույթն ու ժողովրդավարության որակը:

5. Վերոնշյալ ենթագլխի վերջում հեղինակն առաջարկում է ուսումնասիրված մոդելների հիման վրա դիտարկել խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման ինդեքսի (ԽՄԺԻ) մշակման հնարավորությունը՝ հետխորհրդային երկրների անցումից դեպի համախմբում գործընթացների հիմնախնդիրների հաղթահարումը՝ որակապես նոր փուլ տեղափոխելու նպատակով: Դրական գնահատելով հեղինակի առաջարկը, կարծում եմ, որ աշխատանքը կշահեր, եթե հեղինակը սեփական վերլուծության արդյունքում՝ որպես գիտական նորույթ առաջ քաշեր ԽՄԺԻ մոդելի օրինակ՝ իրականացնելով չափում ՀՀ-ի օրինակով:
6. Կարծում եմ հետազոտությանը կշահեր, եթե հեղինակը, Դոնթի հայտնի բանաձևով, ՀՀ խորհրդարանում մանդատների բաշխման գործընթացի ուսումնասիրությունը, քանի որ այս մեխանիզմով մանդատների բաշխումը 2018 թվականի ընտրությունների արդյունքում հանգեցրեց մանդատների բաշխման անհամաչափության և խորհրդարանում ընդդիմության ձևավորման խնդրի: Հաշվի առնելով նաև հեղինակի կողմից՝ որպես միջազգային փորձառության լավագույն օրինակ ԳԴՀ խորհրդարանական կառավարման վերլուծությունը, (էջ 128, 138-141, 191) կարծում եմ կարելի է զուգահեռներ անցկացնել ԳԴՀ խորհրդարանի ձևավորման կառուցակարգերի հետ, քանի որ այնտեղ մանդատների բաշխումը տեղի է ունենում Հեյր-Նիմեյրի հայտնի բանաձրի հիման վրա:

Այս ամենով հանդերձ, վերը նշված թերությունները չեն նվազեցնում թեկնածուական ատենախոսության գիտական արժեքը: Հաշվի առնելով այս հանգամանքը, որպես 056 մասնագիտական խորհրդի կողմից հաստատված պաշտոնական ընդդիմախոս գտնում եմ, որ **Մագդա Արմենի Արսենյանի**

«Խորհրդարանական մշակույթի կայացման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է գիտության թեկնածուի աստիճան հայցելու ատենախոսություններին ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԻԳ.00.02-**«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ»** քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս

ԵՊՀ միջազգային հարաբերություններ ֆակուլտետի
հանրային կառավարման ամբիոնի դոցենտ,
քաղաքական գիտությունների թեկնածու՝ Է. Քալանթարյան

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ Է. Քալանթարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար, պատմ. գիտ. թեկն., ասիստենտ Ա. Հովսեփյան

«06» դեկտեմբերի 2020